քրն էլ չմոռնային*). ընկերութեան ծախսով մի երկու տեսակ լրագրներ կ'ստանան կիւրակի օրերն կարդալու համար, ու տընտեսական կառավարութեան մասին չափաւորութեան և խնայողութեան նկատմամբ ունին ընկերական պայմաններ, որոնցից դուրս եկողները կ'պարտաւորուին գանձանակին տուգանք տալ. իւրաքանչիւր ընկեր պարտաւորուած է, որ իւր տան հարկաւորեալ իրեղէնքն թէ որ ընկերական կրպակին մէջ կ'գտնուին, այնտեղից գնէ՝ և ոչ ուրիշ տեղից. ահա՜ նախանձելի ընկերո՜ւթիւն:

Վերոյգրեալ ընկերութիւններից զատ այս տարի մի քանի ամսով յառաջ՝ մի քանի պատանիներ ուսումնասիրական հոգւով վառուած իւրեանց գործունէութիւնը ցոյց տալու նպատակաւ՝ ձեռնարկեցին մի նոր ընկերութիւն ևս կազմել շաբաթական հինգ հինգ կոպէկ տուրքով. այս ընկերութիւնը թէպէտ առ այժմ աննպատակ մականունը կ'կրէ իւր վերայ՝ որպէս թէ ապագայ ժամանակի պահանջը ինչ ապրուստ պէտք որ յառաջ բերեց, նոյն պէտքի համար գործադրուի ընկերութեան դումարած դրամը, և այսպէս ստանայ իւր յատկական անունը. սակայն իւր սկզբի ձեռնարկած գործքից երևեցաւ՝ որ ըստ մեծի մասին համանպատակ է վերոյիշեալ Ուրբանոմ ընկերութիւնը: Նշանի թէ՝ ինչպէս որ սոցա գլխաւոր աշխատողներին առաջարկուեցաւ, մեր ազգի պատմութեան մէջ յաճախակի յիշատակուած բաժանման փնտռտութիւն դէպքերից խրատ առնելով՝ Ուրբանոմ ընկերութեան հետ միանային պահելով և իւրեանց առանձին մնանաւոր նպատակը:

Մ. Վարժապետ Արքեպիսկոպոս:

Ի 20-ն Օգոստոսի 1869 ամի
ՅԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԳՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Շարունակութիւն (*)

ՆԱԽԱԴԻՏԵԼԻՔ ՄՏՔԻ ՄԱՍԻՆ

Ա.

Մարդուս հանճարը իւր սկզբնական գիւտերի հետ ի միասին հնարել է և գիր: Այդ գիրը երկու առաւել մեծ պաշտօն է կատարում մարդկային մտաւոր զարգացման ասպարիզումը — անցեալից հաշիւ է ստանում և ապագային հաշիւ տալիս: Նրթէ փորձերն են, որ սնունդ են դառնում մեր մտքի զարգացման համար, և գիրն է, որ մեր նախորդների փորձերը կենդանացրելով տալիս է մեզ, ապա ուրեմն առանց գրի մենք կարողանալու չէինք մեր նախնեաց մտաւոր ժառանգութիւնը ստանալ, և այդ չստանալով՝ պիտի յաւիտեան ժամանակաց միակերպ դրութեան, այն է՝ վայրենութեան մէջ մընային: Խօսք չկայ ուրեմն, որ մարդուս բանականութեանը վայել գիւտերից ամենակարևորագոյնը գիրն է: Սակայն գիտենալ արժան է, որ մարդու ստեղծ մի ամենահար-

*) Այս մասին խմբագրութիւնս ևս կը փութայ յորդոր կարդալ յիշեալ Աբրոյ Սէրոյ Ընկերութեան բարենպատակ անդամոց, որպէս զի բարեհաճին եւ սրբազան պարտաւորութիւն համարին ինքեանց առաւելապէս Ուսումնարանաց զարգացմանց եւ արդիւնաւէտ բարգաւաճմանց նպաստելու ամենայն ջանքով ըստ չափու Ազգասիրութեանց իւրեանց:

Ծան. խմբ.

(*) Տես Թիւ Ա. եւ Բ. 1869 ամի:

կաւոր գիւտը անգամ շուտով ընդհանուր մարդկութեան սեփականութիւն չէ դառնում, այլ սորա հակառակ՝ մի քանի դար անցնում է, մինչև նա զանազան անհատների ձեռք անցնելով և տեսակ տեսակ կեպարանափոխութիւն ստանալով՝ վերջապէս մասնաւորի ձեռքից անցնում է ընդհանուրին, և դարձեալ չէ դադարում նորա թէ կատարելագործուիլը և թէ ընդհանրանալը, այլ անընդհատ կերպով շարունակվում է մարդկութեան մտաւոր զարգացման հետ ի միասին: Այդ ժամանակ, որ գիրը մասնաւոր անձանց ձեռքում հրաշագործութեան գործիք էր եղած և մի ցեղի մէջ ողջոց որդի շարունակվում էր իբրև ժառանգական սեփականութիւն: Ո՞ւր էր այն ժամանակ այժմեան շարժական տառերը, տպագրութիւնը, գրականութիւնը, և այլն:

Այն գլխաւոր գործիքը, որ մենք գործ ենք դնում այլոց կամ մեր միտքը զարգացնելու համար, դոյն այդ գիրն է: Բայց ինչ պէս որ գիրն ինքը ենթակայ է կատարելագործութեան, նոյնպէս և նորա տարածելու կերպը ենթակայ է կատարելագործութեան: Գիրը, կամ ուղիղն ասել՝ գրականութիւնը չէ խնայողանում մարդու, այլ փորձերից ուղիղ հասկացողութիւն կաղմելը: Մէկը կարող է գրագէտ լինել, իմանալ կարդալ, բայց այդ ապացոյց չէ խելքի. վասն զի դա գուցէ միջոց է տուել նորան առաւել և յիմարանալու և մոլորուելու, որպիսիք մենք իւրաքանչիւր քայլափոխում տեսնում ենք:

"Գրականութիւնը, իբրև պահպանող մարդկութեան բոլոր մտքերի, միմիայն զուտ խելքութիւն և ճշմարտութիւն չէ ներկայացնում, այլ և շատ յիմարարանութիւնք: Ուստի գրականութենից սանելու օգուտը ոչ այնքան նորա յատկութենից կախում ունի, որքան կարդացողի սովորելու կարողութենից, նորա ընտրողութիւն անելու ընդունակութենից"։ Արդարև մենք սովորարար խոստովանում ենք շատ անգամ, թէ՝ իրաւ է, ես այս ինչ գիրքը կարդացել եմ, բայց այն ժամանակ ես ոչինչ չէի հասկանում, և հետևապէս ոչինչ օգուտ չքաղեցի. կամ՝ այս ինչ գիրքը պատանեկութեանս ժամանակ կարդալով՝ ես ուրիշ կերպ էի հասկանում և նա ծռեց իմ դաղափարս: Մեր այսպիսի խոստովանութիւնքը ակն յայտնի երևցնում են մեզ, թէ ո՞ւրքան, ո՞րպիսի և ի՞նչ ազդեցութիւն ունի գիրքը կամ գրականութիւնը ընթերցողի վերայ:

Ընթերցանութեան միակ արժանաւորութիւնն այն է, որ բաց է անում կարդացողի համար մեծամեծ շտեմարաններ անհատնում փորձերի: Մարդը իւր տանը նստած՝ միակ կարդալու միջնորդութեամբ պարտում է ամբողջ աշխարհը, բարձրանում է մինոլորդ, մտնում է երկրի խորերը, ծովի յատակը. վայրենի ազգերը իրանց անմեղ վիճակի մէջ՝ միամտութեամբ ցոյց են տալիս իրանց մտաւոր զարգացման ստորութիւնը. լուսաւորեալ ազգերը բաց են անում նորա առջև իրանց քաջագործութեանց կենդանագիրը և մատնացոյց լինում առնի բարձր կէտերի, դէպի ուր նոքա դիմում են հերոսական քայլերով ...: Բայց և այսպէս սոքա բոլորը փորձեր են, որոնք այն ժամանակ միայն կարող են լայնացնել ընթերցողի հասկացողութեան շրջանակը, երբ ընթերցողը բնո-ին-ը նոցա մարսելու չափ զարգացումն ունի, այդ փաստերից, այդ հանդամանքներից ուղիղ հասկացողութիւն կաղմելու կարողութիւն ունի: Թող գիրքը ունենայ բարոյական բովանդակութիւն, դա ևս այն ժամանակ է կարող իւր նպատակին յարմար ազդեցութիւնը գործել ընթերցողի վերայ, երբ նա դէպի դոյն այդ առաքինութիւնքը շատ կամ սակաւ ձգտողութիւն ունի: Դու այս է պատճառը, որ մի և նոյն գիրքը զանազան մարդոց վերայ զանազան ազդեցութիւն է գործում. մինը կարդում է ծիծաղելով,

միւսը մի և նոյնը կարդում է պատասխանելով, երրորդը բոլորովին անտարբեր կերպով։ Մոսէս մարգարէի Եգիպտացուն սպանելը, նորա փախուստը, իւր հայրենակիցներին ազատելը՝ ոչինչ տպաւորութիւն չէ գործում այն լսողի վերայ, որ չէ զգում դեռ էս, թէ ինչ բան է ազգասիրութիւնը և ինչ տեսակ ալիքներ է բարձրացնում մարդուս սրտի մէջ այդ զգացմունքը, սակայն փոքր ի շատէ այդ զգացմունքն ունեցողի վերայ մեծ տպաւորութիւն է գործում և պատասունքի հեղեղ թափել տալիս նորա աչքերից։ Կարդալով երեւելի մարդոց կենսագրութիւնքը՝ նոցա կեանքի այն կէտերն են գրաւում մեզ, որոց ձգտողութիւնքը ունինք մենք։ Մեզ ամենեին չէ գրաւում մի այնպիսի գիրք, որոյ բովանդակութիւնը ըմբռնելու համար նախապատրաստուած չենք մենք, և սովորաբար մեր ուշադրութենից փախչում են շատ երեւելի մարքեր, միմիայն նորա համար, որ մենք այդ մասին երբէք մտածած չէինք։ Պատմում են, որ Յուլիոս Կեսարոսը իւր երիտասարդութեան դեռ էս անդործ ժամանակ Աղէքսանդր Մակեդոնացու արձանին նայելով՝ լիարժէքացաւ բրուել իւր սրտաստուքը, և բացագանչեց. "Ա՜խ իմ հասակումն ամբողջ աշխարհքին տիրել էր, իսկ ես դեռ էս ոչինչ չեմ շինել"։ Մի՞թէ կ'ասէ այսպիսի խօսք այնպիսի մի անհատ, որոյ մէջ ինքնապատուութեան զգացմունքը դեռ էս մի շօշափելի բան չէ դառած։

Ինչ որ ասացինք ընթերցանութեան մասին, նոյն և մի օրէնքին է հպատակ և շրջակայ հանգամանքներից օգուտ քաղելը։

Ահա այս բոլոր օրինակներից պարզ երեւում է, որ մարդուս միտքը կանոնաւոր կերպով զարգանալու կարօտութիւն ունի։ Եւ մեզ՝ մտքի այդ կարօտութիւնը լցուցանելու համար՝ հարկաւոր է իմանալ, թէ ինչ բան է ինքը միտքը և ինչ պայմանների է կարօտ նորա զարգացումը։

Բ.

Մի հղօր թշնամի յաղթելու համար հարկաւոր է ոչ միայն ուժ և ճարպիկութիւն մարմնոյ, այլ և անվհերութիւն սրտի, որ է ուժ հոգւոյ։ Մարմնոյ ուժը այն ժամանակ կատարեալ է, երբ նորան նպաստակից է հոգեկան ուժը. բայց այդ երկուքն էս սոսկ ուժեր լինելով՝ հարկաւոր է դոցա մի գործադրող, հասկացնող զօրութիւն, որ իմացուէր, թէ ինչ կերպով առաւել դիւրին կը լիներ յաղթել զայդ թշնամին։ Այդ գործադրող կամ թելադրող զօրութիւնը մարդուս մտքի գատողութիւնն է։ Այնօրինակ՝ Մի արուեստ կատարելագործելու համար սակաւ ուժեղներ չը կան, որոնք համբերութիւն և եռանդ չունենալով շատ յառաջ չեն գնում, իսկ եռանդը և աշխատութիւնը այն ժամանակ միայն վարձատրվում են, երբ յառաջընթացութիւնը լինում է մտքի ուղղագէս թելադրութեամբը. եթէ ոչ՝ կուրօրէն մարդ յառաջ դիմելով շատ անգամ խորխորատների մէջ է ընկնում։

Արդու այս հոգեկան և մտաւորական յատկութիւնքը ջոկ ջոկ տեսնելով, մենք կարծում ենք, թէ դոքա առանձին առանձին աղբիւրից են յառաջ գալիս, բայց ով որ հարց ու պատասխանով հոգեբանութիւն և պատմաբանութիւն սորվեցնող ուսուցչի ճոռոմաբանութեան ենթարկուած չէ, նա շուտ կը համոզուի, եթէ ասենք դոցա աղբիւրը մի է և ոչ երկու։ Արդուս այն ներքին երեւոյթները, որոց մենք սովորաբար ներքին զգացմունք ենք ասում, որպիսիք են՝ երկիւղ, ամօթ, խիղճ, սէր, ատելութիւն, նախանձ, տրտմութիւն, բարկութիւն և այլ և այլ առաքինութիւնք և մեղութիւնք՝

դոքա ամենքը ինքնաբոյս և ինքնուրոյն գոյացութիւններ չեն, ոչ վերացական բաներ և ոչ սոսկ տպաւորութիւնք արտաքուստ ներս սողուած. այլ հասկացողութիւնք են սխալ կամ ուղիղ կազմած, որոնք կիրք դառնալով անհատի մէջ՝ վրդովմունք կամ խաղաղութիւն են տալիս նորա կեանքին: Մենք տեսնում ենք, որ դոցանից շատերը անհետանում են, շատերը կերպարանափոխվում մարդի զարգացման հետ ի միասին. ինչ որ այսօր սիրում է մարդ, պաշտում ու պատվում, միւս օրը արհամարհում է և տոում, եթէ նորա վերայ ունեցած հասկացողութիւնը փոխվում է. ինչից որ այսօր վախենում է, վաղը բանի տեղ չէ դնում և այլն: Ուրեմն դոքա ոչ այլ ինչ են, եթէ ոչ մարդի արդիւնքը: Բայց և այնպէս կարելի չէ ասել, որ՝ եթէ մինը խելօք է, նա և՝ առաքինի կը լինի՝ և ոչ կարելի է բացասել ուղղակի: (Այս մասին կը խօսինք յօդուածիս վերջումը):

Արդս ունի ընդունակութիւն՝ երևակայելու, զգալու և հաւատալու. յիշելու, դատելու և հասկանալու: Սոքա բոլորը ի Դուսին աւաջ՝ ասվում է ՄԻՏՔ կամ հոգւոյ կարողութիւն* (Իւր գործին անհրաժեշտ դատարակը՝ փոխանակ դոքա բոլորը ի միասին գործ դնելու, օգուտ է քաղում մի քանիսից միայն, և այն բոլորովին կուրօրէն: Զեռք առնելով մի տհաս մանուկ, անմիտ դատարակը սկսում է աշխատեցնել երեխայի միայն յիշողութիւնը կամ դորա հետ և երևակայութիւնը, որոնք ամբողջութիւն չըկազմելով, հետևապէս աշակերտին ոչ միայն թերագարդ են անում, այլ և ճնշում և բթացնում են նորա մտքի միւս յատկութիւնքը): Բայց ի՞նչ տեղից ստացաւ նա այդ կարողութիւնը. արդեօք իջնէ արդէն նորա մէջը կամ, թէ յետոյ է երևան գալիս, և այդի՞նչ կերպով: Ահա այս է գլխաւոր և ուշադրութեան արժանի հարցը. վասն զի այս հանգամանքի հետ անծանօթ դատարակը առաւել հեշտութեամբ դահճի պաշտօն կարող է կատարել, քան թէ դատարակի:

Մեր մարմինը աճում ու զարգանում է սակաւ առ սակաւ, աննկատելի կերպով, և ապա սկսում է մի և նոյն կերպով նուաղել: Տղայութենից մինչև ի զառամութիւնը մեր մարմինը զանազան կերպարանափոխութիւն է ստանում արտաքուստ, այդ միջոցին նա կերպարանափոխվում է և՝ ներքուստ: Այս պատճառով անչափահասը և չափազանց հասակաւորը, պատանին և երիտասարդը, ակարը և առոյգը, աղատը և ստրուկը, դոքա բոլորը միահաւասար հասկացողութիւն կազմելու կարողութիւն չունին. վասն զի նոցա կենսական պահանջմունքները, այսպէս կամ այլապէս մտածելու հարկադրող զօրութիւնը այլ կերպ է: Որա նման այլ ևս հազարաւոր օրինակներ կարող ենք բերել ապացուցանելու համար, որ մարդուս միտքը մի էական գործիք չէ ամենի զարգացի մէջ դրած, որով նորա կրը ուզենան՝ մտածեն,

(*) Մեր հին գրականութեան մէջ Դուսի բառը շատ նշանակութիւններ ունի, իսկ Խելքը ուղիղ բառի նշանակութեամբ է գործ դնվում գլխաւորապէս: Ժողովուրդը միտք բառը գլխաւորապէս յիշողութիւն բառի փոխանակ է գործ դնում, իսկ մտքին խելք է ասում: Որպէս զի մեր գործ դրած բառը ուղղապէս հասկացուի, մենք աւելորդ չենք համարում ասել, որ խելօքութիւն եւ յիմարութիւն բառերը իրարու հակառակ նշանակութիւն ունենալով, հետևապէս երկուքն ևս մտքի արդիւնքն են: Կամիմ ասել խելօքութիւնը յիմարութիւն չէ, եւ ընդ հակադարձն. բայց միտքը կարող է երկուքն ևս լինել, մինը իւր սխալ դատողութեամբը, միւսը ուղիղ:

ամեն տեսակ խնդիր լուծեն, վճռեն, այլ դասոսկ ընդունակությունն է. բայց ի՞նչ ասել է ընդունակությունն: Որ մարմնոյ բոլոր մասունքը ընդունակություն ունին շօշափելու, բայց մի բանի պիտի ենթարկուի նա, որ երևի այդ ընդունակությունը:

Որ մարմինը ունի զգայարանքներ, որպիսիք են աչք, ականջք, քիթ և բերան, և դոքա ամենքը զգալու ընդունակություն ունին, բայց եթէ աչքը կոյր լինի կարող է միթէ բան տեսնել, և կամ եթէ կոյր էլ չըլինի՝ կարող է տեսնել և այնպիսի բան, որ իւր տեսողություն ենթակայ չէ, կամ եթէ առարկան մթնով պատած է. վասն զի աչքը իւր մէջ լուսոյ հանք չունի, լոյս ունակ չէ, այլ լոյսը իւր վերայ տպաւորելու, և նորա միջնորդությամբ առարկաների գոյը, մեծությունը, հեռաւորությունը և այլն որոշելու ընդունակությունը ունի, որ շատ անգամ լինում է նուազ, ուրեմն և կարօտ կանոնաւոր գործադրության, և շատ անգամ սխալ, ուրեմն կարօտ մարդի առաջնորդության: Ահա այսպիսի պայմանների ենթակայ է և այն ընդունակությունը մարդոյ, որին մենք անուանում ենք միտք: Փորձ, զգայարանք և միտք այնպէս կախում ունին միմեանցից, որ առանց մինի՝ միւսը ոչինչ է: Փորձերը տպաւորվում են զգայարանաց վերայ, զգայարանքները այդ տպաւորությունքը հաղորդում են մտքի այս և այն յատկությանը, որով նորա սկսում են ամրիլ և զարգանալ*:

(*) Զենք սխալուիլ եթէ ասենք եւս, թէ զգայարանաց հաղորդությունը տպաւորվում են ուղեղի վերայ: Զարմանալի չէ ամենեին, եթէ ուղեղը, որ նուրբ ջիղերով կապակից է մարմնոյ բոլոր մասունքների հետ, իւր զարմանալի շինուածքին համեմատ, ունենայ եւ զարմանալի յատկություն, այսինքն տպաւորել իւր վերայ զգայարանաց հաղորդությունը եւ նոցա միմեանց հետ համեմատելով կազմել հասկացողություն. կամ որ մի եւ նոյն է ասել, նորա մէջ պարզ տպաւորությունը իրարու մօտ դալով, կազմուին հասկացողություն: Բայց որովհետև այդ տպաւորացուցանելու համար մեզ հարկաւոր կը լինի անօգտաւէտ շատախօսություն մէջ ընկղմիլ, ուստի աւելի հաւանական ենք համարում ասել, թէ դա ընդունակություն է Աբարչից մեր բնությանը շնորհած, որին նախամեծար տեղ մեր զլուխն ենք համարում. թէեւ այդ հանգամանքը չէ ամենեին մեր ամենահարկաւոր դիտելու բանը, այլ թէ միտքը, թէ ուղեղի ընդունակությունն է, թէ ինչ որ է, ի վերայ այսր ամենայնի նա ինքն ըստ ինքեան այնպէս է, ինչպէս մի զգայարանք առանց փորձի: Իսկ փորձ ասում ենք առհասարակ բոլոր այն եղելությունները եւ գործողությունները, որ կան ֆիզիկական եւ ոգեկան աշխարհի մէջ, որոնք եւ նիւթ են մեր զգայարանաց եւ իմացականության. միով բանիւ ամենայն ինչ որ զգում ենք, նա ֆ-ր է: Բնությանն մէջ միակերպություն չկայ: Մեր աշխարհի զանազան մասներումը զանազան փորձեր է հաղորդում բնությունը մարդոյ. մի տեղ այնքան սարսափեցուցիչ, որ ցաւագարում է մարդոյ ուղեղը եւ սարկացնում նորա դատելու կարողությունը, միւս տեղ սորա հակառակ, մեծ օժանդակություն է ցոյց տալիս մարդոյ մտաւոր զարգացմանը, որտեղից եւ սկսում է լուսաւորությունը մուտ գործել նաեւ այնպիսի տեղեր, ուր իրեն անհնար էր ծնանիլ.....

Դասախոսակի օգնությունը ահա այստեղ է հարկաւորվում: Իւր գործին հմուտ դասախոսակը՝ երեխայոց զգայարանքներին ենթարկելով այնպիսի փորձեր, որ դիւրահաս է նոցա բնությանը, օգնում է մի և նոյն ժամանակ՝ որ նոքա նոցանից ուղիղ հասկացողություն կազմեն, և այսպէսով վարժում է նոցա ուղիղ դատելու մէջ: Միտք զարգացնելու գլխաւոր պայմանն այն է, որ նախ՝ արհեստական կերպով չըհաղորդուի երեխային այնպիսի փորձ, որոյ պահանջմունքը դեռ նոնորա մէջ չըլինի. երկրորդ՝ այդ տպաւորությունը նոյնությամբ յետ ստանալու պայմանա- չհաղորդուի նորան, այլ այն նպատակա-, որ դոքա նորա

մտքի զարգացման համար նիւթ դառնան, բանան նորա միտքը, վարժեն նորան ուղիղ դատել։ Թէ աշակերտներին ոչինչ չպէտք է ընդունել տալ կուրօրէն, այդ կանոնը պիտի պահպանուի նոյն իսկ այբ-բեն սորվեցնելու օրից. բաւական չէ, որ աշակերտը այբ ասելու փոխանակ՝ ասէ ա՝, այլ հարկաւոր է առաջ ու առաջ նախապատրաստել նորան ըմբռնելու, թէ ինչ բան է այդ ա։ Աշակերտը պիտի հասկանայ, մարսէ ամենայն բան, ինչ որ սովորում է վարժապետից, որպէս զի նա ոչ թէ մի անշունչ բառ դիրք դառնայ, այլ նախապատրաստուի լինել կենդանի և առողջ դատողութիւն ունեցող՝ խելօք մարդ։ Ասում ենք նախապատրաստուած լինել և ոչ թէ ուղղակի լինել, և այս յետագայ պատճառով։ Ուսումնարանը չէ կարող կատարելագործել մարդուս միտքը, որքան և բարեկարգ լինի նա. այդ նպատակին միայն ինքնակրթութեամբ կարելի է մօտենալ, և այն՝ ուսումնարանում կանոնաւոր կերպով նախապատրաստուելին զինի։ Մարդուս մտքի զարգացումը ընդհատումն չունի. չկայ մի նշանակեալ կէտ, որից վերայ կարելի լինի կանգ առնել։ Կեանքի դիպուածները առաւել բաղմակողմանի են, քան թէ ուսումնարանում աւանդուելիս գիտութիւնքը, որոնք զլխաւորապէս ստիպեան նշանակութիւն ունին, քան թէ իմացական. բայց այս կայ, որ այդ գիտութիւնքը բաց են անում ուսանողի միտքը, տալիս են նորան էրկիւղելու և դատելու իրաւունք և կարողութիւն. կամ ասել՝ դառնում են նորա համար մի այնպիսի չափ, որով նա չափչփում է կեանքի հանդամանքները և վերահասու լինում նոցա նշանակութեանը։ Գիտութիւնը կեանքի բոլոր հանդամանքները մի առ մի չի բացատրում, այլ մատնացոյց է լինում այն օրէնքի վերայ, որով կատարվում են այդ հանդամանքները։ Այս պատճառով կանոնաւոր կրթութիւն ստացած ուսանողին պէտք չէ, որ ամենայն իւր տեսնելիս բաների մասին լաւ լինի կամ կարդացած ուսումնարանում, այլ արդէն ունի իւր ձեռին մի այնպիսի չափ, որով չափում է իւր լաւն ու տեսածը և իմանում նոցա սխալ կամ ուղիղ՝ այսպէս կամ այլապէս լինելը։ Այդ չափն է գիտութեան դառն փորձերով ձեռք բերած այն ճշմարտութիւնը, թէ բնութեան մէջ ոչինչ չկայ, բայց միայն հանդամանք և պատճառ, և դրա բոլորովին օրինաւոր հետևան։ Ուստի նա չիմանայ մի որ և իցէ հանդամանքի բուն պատճառը և վերապրի նորան ոչ ուղիղ պատճառ, այսու ամենայնիւ նա այլ կերպ դատել կարող չէ, առանց մեղանչելու իւր խղճմտանքի դէմ։

Գ.

Հնամոլ վարժապետների մոլորութիւնը

Լեղուն մտքի արտայայտողն է. ինչպէս մտածում է մարդ, նոյնպէս և խօսում է. որքան որ բան գիտէ, այնքան բանի վերայ էլ խօսելու կարողութիւն ունի։ Այս օրէնքի հիման վերայ՝ երեխայի լեղուն բոլորովին համապատասխանում է իւր մտաւոր կարողութեանը. նորա լեղուն առաւել ճիշդ թարգման է իւր մտայ, քան թէ ուսեալների, որոնք գիտեն բառաշարդութեամբ և անձռոնի ճոռոմաբանութեամբ հող փչել պարզամիտների աչքերը։ Այդ երեխան, որ հաղիւ-հաղ կարողանում է իւր մտքի թարգմանը լինել և այն իւր մայրենի կենդանի բարբառով. դորա ձեռքը տալիս են ցքրհեղեղեան այբբենարան և հարկադրում ասել.

լու՝ ԲԷՆ ՎԷ ԿԷՆ՝ բո՜, ՔԷՄ ՎԷ ԿԷՆ՝ գո՜...
բայց որ երեխան չի կարողանում յինչ, —
(ըստ որում հասկանալ, հասնողուիլ, որ այդ
այդպէս է, ոչ միայն երեխան չի կարող, այլ
և մեծահասակը, որին առաւել դժուար է
կուրացնելը) ենթարկում են չարաչար տան-
ջանաց, իսկում նորա բնութիւնից ամենայն
ինչ, որ բանական է, և վերափոխում շնչ-
աւոր կենդանու, որպէս զի հեշտ լինի այ-
նուհետև իւրեանց բարոյական պարտակա-
նութիւնքը կատարել. այսինքն ամբարել
նորա յիշողութեան մէջ ամէն տեսակ անա-
պիտան բաներ՝ նորան անհասկանալի բառե-
րով, և մինչև անգամ քերականութիւն,
այն նպատակաւ, որ իբր թէ դա պիտի դառ-
նայ բանալի նորա փակուած մտքի դուռն
համար, որով աշակերտը կը մտնէ իւր մտքի
մէջ և կրկին ջոկջկել այն բոլոր անհաս-
կացողութիւնքը, որ պահ էին տալիս իրեն
չարաչար պատիժներով։

Բայց այս չէ ամենն։ Նոցա նպատակը.
նոցա նպատակը բարի է. բայց յառաջ գա-
լով սոսկ բարոյական աղբիւրից, իրեն ա-
ռաջնորդ չունենալով առողջ դատողու-
թիւնը, այդ պատճառով հետևանքը լինում
է չար. նոքա կարծում են, թէ այդպէսով հեշ-
տութեամբ կը հասնեին իրանց նպատակին,
որ է առնել աշակերտներին ճշմարտապէս
խելք և տաքնի։ Ապրժապետը այնքան
պարզամիտ է, որ ինքը խելք չունենալով
աշխատում է աշակերտին առնել խելք։
Նորա խելքը իւր անգիր սերտած գրքերն
են, որպէս զի այդ խելքը մտցնի աշակեր-
տաց գլխի մէջ, տալիս է նոցա ձեռքը մի գիրք,
(որ որքան անհաս լինի երեխայական մտաց,
այնքան լաւ է նորա կարծիքով) և պահան-
ջում է, որ աշակերտը այդ գիրքը կէտ առ
կէտ անգիր սերտեն։ Ամենք, տեսնելով որ
անգիր անելու դժուարանում են աշակերտք,
կրճատում են դասագրեանքը։ Այն հան-
ռաստութիւնքը և հարց ու պատասխանի քե-
բած աղճատմունքները որ տեսնում ենք այս
տան և ինեներորդ դարումը, դոքա ոչ այլ
ինչ են, եթէ ոչ լուսաւորութեան հետ-
ևանք։ Այսն զի վարժապետները միջոցապէս
խղճալով աշակերտներին, հեշտութիւն են
տուել անգիր սերտելուն, և այլ ոչինչ։
Աշակերտը այսու ամենայնիւ ստրուկ է բա-
րոյապէս և մտաւորապէս։ Աշակերտը այս
բոլորը բարձելով յիշողութեան վերայ, մի
քանի բան էլ դէն ձգելով, (եթէ սատիկ
ծանր է այդ բեռը) վերադարձնում իւր վար-
ժապետին նորա տուած աւանդը։ Բայց այդ
աւանդը մի անմարսելի կերակուր է, — մի
այնպիսի բեռն է, որից ոմանք ճ՝նշուելով
ստրկանում են և դառնում կոյր հրամանա-
կատար, իսկ ոմանք, և այն առաւել մտա-
բացները, զզուելով այդ տաժանելի աշխա-
տութիւնից՝ փախչում են կրթութեան ասպա-
բիզից և կեանքի բերմունքներին մատնում
իրանց մտաւոր և բարոյական վիճակը։

Եթէ կրթութեան կերպը այս կուրու-
թիւնը չունենար, ոչ ոք չէր զարմանալ, թէ
ինչու երբեմն ոչ մի ուսումնարանում չը-
կրթուած մարդ կարողանում է հիանալի
շնորհաց տիրանալ։ Ուսումը հասկանալով
վերոյիշեալ աղճատմունքը, մենք դորանից
եզրակացնում ենք, թէ կայ մի այլ զօրու-
թիւն, որ սակաւ ընտրեալներ ունին, որ և
յայտնի է ՅԼԲ+ կամ գաղանի անունով, և
այդ է նոցա այդ աստիճանին հասցնող պատ-
ճառը։ Այս մոլորութեան դէմ աւելորդ
չենք համարում յետագայ նկատողութիւնը
առաջարկել այդպէս կարծողներին։

Միտք, զգայարանք և փորձ. այս երեքն
են, որ լայնացնում են մարդուս հասկացո-

զութեան շրջանակը. ուստի ոչ ապուշը և ոչ անզգան կարող են օգուտ քաղել փորձերից, և ոչ միտքն ու զգայարանքը կարող են մի բան շինել առանց դէ-ռիի, որ է փորձը: Բացի այս՝ աշխարհիս երեսին չկայ և ոչ երբեք բան, որ զրականապէս իրարու նման լինին, ուստի զարմանք չէ, որ մարդոց ընդունակութեանց և հակամիտութեանց մէջ զրականապէս միահաւասարութիւն չկայ: Բայց այս զանազանութիւնը ունի իւր բնական, սրարդապէս յայտնի պատճառը, և դորանից չի կարելի եզրակացնել, թէ մինը զարմանալի շնորհք է ստանում առանց աշխատութեան, առանց վարժուելու, ձրիապէս. իսկ միւսը դառն աշխատութեամբ և վարժապետի օգնութեամբ է ուսանում, բայց այսու ամենայնիւ չի կարողանում հասնել առաջինին: Իրաւ է, լինում են երբեմն այնպիսի մարդիկ, որոնք առանց վարժապետի կարողանում են կատարելութեան մօտենալ. բայց բոլորովին անհիմն և սուտ է այն կարծիքը, թէ դոքա այդ աստիճանին հասնում են առանց վարժուելու, և թէ դա մի այլ պատճառ ունի տաղանտ անունով: Այսպէս միայն այն մարդը կը կարծէ որ բոլորովին ազատ է ինքնագործունէութեան և ինքնակրթութեան գերահրաշ ազդեցութիւնից: Մինը վարժվում է ուսումնարանում, միւսը բացօդեայ կեանքումը. մինը վարժապետ ունի, միւսը չունի, բայց վարժողութիւնը թէ մինի և թէ միւսի համար կայ, է: Մինը յառաջ է գնում վարժապետի թելադրութեամբ, որ շատ անդամ լինում է ակամայ և կուրօրէն, որով և նուազում է իւր սեփական օգնութիւնը, իսկ միւսը իւր մտքի օգնութեամբ, աղատօրէն և գիտակցաբար, որով սա առաւել ուժ է ստանում յառաջ գնալու, մանաւանդ որ իւր բոլոր ոգեկան ուժը մի տեղ հաւաքած, դէ նպատակի է դիմում, մինչդեռ առաջինը կամ ամենևին չունի նպատակ, կամ այնքան նպատակներ է ստացել վարժապետից, որ ինքն էլ չը գիտէ, թէ դէպի որն աւելի հակամիտ է և ընդունակութիւն ունի դիմելու:

Բայց ինքնակրթի մարդու աշխատութեան արդիւնքը կախում ունենալով այն կեանքից և դրականութիւնից, որոց ազդեցութեամբ նա զարգանում է ոգեպէս և մարմնապէս, հետևապէս ամեն տեսակ կեանք և դրականութիւն կարող չէ ինքնակրթութեամբ կատարելութեան մօտեցած մարդիկ երևցնել և ոչ հանճարաւոր վարժապետի օգնութեամբ կարելի է մօտենալ այդ նպատակին, եթէ նորա ազգային կեանքի և դրականութեան մէջ չկայ այն հարկաղրող զօրութիւնը, որից զրդուած՝ յառաջ են գնում մարդիկ երանց արդիւնքը այս և այն առնչութեամբ մէջ երևցնելով: Ուստի մարդուս բարի կամ չար ձգտողութեանց աղբիւրը նորա ոգեկան աշխարհի մէջ չպէտք է փնտրել, թէև տրամադրութիւն ևս լինէր նորա մէջ, այլ ընտանեկան և ազգային կեանքի:

Երևելայոց քնքուշ բնութեանը շատ բան է հաճելի թւում, որից նոքա զրաւվում են հոգով և մարմնով: Նոքա սկսում են համանմանել այն անհատին, որ իրանց դուր է գալիս, կատարել այն գործը, որ իրանց հաւանելի է: Այդ գործը սկզբում լինում է իրրև խաղալիք, հուսկ յետոյ օգտաւէտութիւն նշմարուելով նորա մէջ, ուղղութիւն և նպատակ է ստանում որով և խաղալիքը մօտենում է իւր նախագաղափարի նմանութեանը, և գերազանցում ևս: Այսպէս ինքնուրոյնաբար աշխատ, փոքրահոգ, լաբախաղաց և այլ այսպիսի անձինք բաւականութիւն տալով իրանց մանկական ձգ-

տողութիւնը՝ վերջապէս հանում են այդ աստիճանին։ Դոքա այդ չէին լինիլ, եթէ աչք ունենային, գործի գնող կամ ուսման տուող ունենային։ Նոյն իսկ ուսումնական ինքնակիրթները լենում են զլխաւորապէս խնամատարից զուրկ հոգիքը, ինչպէս նաև բոլոր երևելի գողերը և աւազակները. սոքա ևս փոքրուց սկսում են և մեծուց աւարտում, բայց այսու ամենայնիւ սոցա չենք ասում տապանտաւոր։

Մենք բաղմաթիւ փաստեր ունինք տաղանտ կամ ձիրք ասած բանը ցրելու, բայց յամառուած մարդոց դժուար թէ ազդեցութիւն գործէ նոյն իսկ Աստուծոյ հրամանը աշխատութեան մասին։ Հասկացողին մէկ, չըհասկացողին՝ հազար։

Դ.

Մարդուս վերին, կամ ասել դէպի կատարեալն ձգտողութիւնը երկու տեսակ է. մինը դիմում է դէպի ճշմարտութիւն, միւսը դէպի բարին։ Այս բարւոյ ձգտողութիւնը բուն հոգևկան է. և հոգին է միայն, որ իբրև մասն Բարւոյ, կամենում է լինել բարի, զի "Ոչիք ոք բարի, բայց միայն Աստուած"։ Մեր Դաւիթ Անյաղթն ևս այս ակնարկութիւնն ունի սրած իւր Սահմանաց գրքին մէջ, ուր ասում է "Պատուականագոյն է բարին, քան զճշմարիտն"։ Այս մի և նոյն հայեացքն ունի և մեր ժամանակակից ուսումնականաց մեծ մասը, միայն այս զանազանութեամբ, որ սովորաբար Բարի ասելու փոխանակ ասում են օգտա-էութիւն։ Օգտաւէտութիւն և բարի բոլորովին իրարու համապատասխանող բառեր են, վասն զի չկայ ոչինչ իսկապէս օգտաւէտ, որ բարի չը լինի, և ոչինչ բարի, որ օգտաւէտ չը լինի։ Բայց որով հետև մեր բոլոր բարոյական պարտականութիւնքը աւելի բարւոյն յարմար է վերաբերել քան թէ օգտաւէտին, ուստի մենք բարին ընտրեցինք, որ բարի լինելով հետևապէս չար չէ, ուրեմն և օգտաւէտ է։ Բայց քանի՞ քանի ճշմարտութիւններ կան, որ չար են և վնասակար։ Խոհեմութիւնը պահանջում է, որ օգտաւէտից և ճշմարտից բարին ընտրենք։ Այս է ահա առաքինութեան ուղիղ ճանապարհը։ Բայց ո՞րն է այն հնարը, որ առանց շեղելու այդ ճանապարհից, առաջնորդում է մեզ ուղղապէս։

Դպրոց՝ մտաց կանոնաւոր զարգացումն։ Մտաց կանոնաւոր զարգացումը կայանում է նորան ամբողջապէս զարգացնելումը։ Միտքը ունի ընդունակութիւն զգալու, երևակայելու, հաւատալու, յիշելու, դատելու և հասկանալու։ Այս այլ և այլ յատկութիւնքը այլ և այլ սնունդ են պահանջում զարգանալու համար։ Ինչպէս մարմնոյ զարգացումը և հանգստութիւնը փոխադարձականութեան մէջ է կայանում և ոչ անշարժունութեան, այս մի և նոյն օրէնքին է հպատակ և մտքի զարգացումը*։ Հասակի այլևայլ շրջանում երևան են գալիս զանազան պա-

(*) Կեանք ունեցող էակի հանգստութիւնը շարժումն մէջ է կայանում, իսկ անհանգստութիւնը — անշարժունութեան. անա ինչպէս։ Մարդս տրի կանգնած բեղարում է, նստում է հանգստանում է, շատ նստած բեղարում է, պառկում է քնում է..... նա քաղցում է, ուտում է կշտանում է. մարսում է, դարձեալ քաղցում է։ Բայց միայն ուտելիքով նա ծանրանում եւ տկարանում է, սկսում է մի բանի պարապել. միակերպութիւնը նորան ծանրացնում է, ձեռք է գարկում եւ ուրիշ բանի։ Անա այսպէս փոփոխակի դրութեան մէջ է գտնում նա իւր թէ հանգստութիւնը եւ թէ երջանկութիւնը։ Աշակերտը մի գործի միայն զբաղելով, կը ծանրանայ. ծանրութիւնը պատճառ կը լինի ատելու այն գործը. իսկ ատելութիւնը կը պակասեցնէ նորա ընդունակութիւնը եւ աշխատու-

հանջմունք, այդ պահանջմունքները հարկադրում են մարդի այս կամ այն յատկութեանը զօրանալու կամ նուազելու. այս շեղման առաջը կարող է առնել կանոնաւոր կերպով նախակրթուելէն զկնի ինքնակրթութիւնը, ինչպէս մարդի, նոյնպէս և մարմնոյ վերաբերութեամբ։ Երկրորդ՝ ուժեղութիւն և առողջութիւն մարմնոյ, որ ընդունակ է անում էակին ընդդիմանալ կենսական դառն հանգամանքներին և ընկճող ու թուլացնող դիպուածներին։ Երբ որ այս երկու կողմանէ կատարեալ է, այսինքն՝ երբ որ ոգեպէս և մարմնապէս պատրաստ է պատերազմելու, այնուհետև նորա ուղղապէս ապրելը կամ յառաջադիմութիւնը կախում ունի յաղթելուց այն հզօր թշնամու, որ կարում է նորա բարոյական ճանապարհը։ Այդ թշնամին է սատանան, եթէ կարելի է այսպէս ասել։

Հոգին ինքն իրան չէ առաջնորդում այս մեռած կենցաղոյս մէջ. կամքի ազատութիւնը դրական չէ, այլ համեմատական, սահմանափակուած։ Հոգւոյ առաջնորդողը միայն է, որոյ զարգացման աստիճանից կախում ունի նորա այսպէս կամ այլապէս լինելը։ Այս կարծիքին համաձայն է բոլորովին մեր խնկելի Աղեշէի այն խօսքը, որ

Քեան ժամանակաչափը, եւ հետեւապէս նա չի դառնալ այն, ինչ որ ուզում էր նորանից շինել իւր իմաստակ դասատուները։ Երեխան տակաւին տնաս լինելով, մի դրուեան մէջ երկար ժամանակ դիմանալու կարողութիւն չունի. նա այնքան ուժ չունի դեռ ևս, որ կարողանայ դէմ կենալ այն կիրքերին, որ Սրարիչը նորա իսկ երջանկութեանը համար դրել է նորա բնութեան մէջ։ Երեխան ոգի ունի, ուզում է զուարճանալ, երգել, խաղալ մտածելու դատել։ Երեխան ուժ ունի, ուզում է աշխատել։ Ահա Ք. ինչու արհեստ է հարկաւոր մտաւոր զարգացման հետ միասին։ Ինքնակրթութեան արդեանց շօշափելի դաղափարը նորա մէջ է, որ դրանով պարապողները դիտաւորապէս մի որ եւ իցէ արհեստ են ունենում. ընթերցանութիւնը լինում է երկրորդական պաշտօն, իբրեւ հանդստութեան միջոց. նորա հարկադրուած չեն անդիր սերտելու, որ միւս օրը ծեծ չուտեն, այլ երբ որ գործից բեզարում են, սկսում են կարդալ.....

բացատրելուց ժամանակակից դառն հանգամանքներէն սոխարուած, թէ "Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ հոգւոյ և մարմնոյ միաք են կառավար, և որպէս առ մի մարդ, այսպէս առ բոլոր աշխարհս"։

Բայց ո՞րն է այն հզօր թշնամին, զոր մենք փոխաբերաբար «սատանայ անուանեցինք», որով զուցէ շատերին դայթակղելու տեղիք տուինք. ըստ որում այնտեղ, ինչ տեղ մեզ առաջնորդ մեր Արարչի մատնէ, այլ գերբնական զօրութիւն մեզ ընդդիմանալ կարող չէ։

Այդ թշնամին է փէրոն-ը։ Երբ որ մենք խօսում ենք մասնաւորի մասին, պիտի ասենք որ դորա բարոյական վիճակը ոչքան որ իւր ոգեկան զօրութենից կախում ունի, մի նոյնքան և առաւել ևս կախում ունի այն ընտանիքից և հասարակութենից, որոյ մէջ նա ծնել և ապրում է։ Մարդս սոսկ իմաստակութեամբ չի կարող ապրիլ, նորան հարկաւոր է և հաց։ Ամեն մարդ աշխատում է հացի դին ունենալ։ Եթէ հասարակութեան մէջ հացը առատութեամբ է գտնում, ապա ամենէն առաքինին այստեղ խելքը կըհանդիսանայ. իսկ եթէ ընդհակառակն մարդութիւնն ունի արժէք, ապա ամենամոլին և եղեռնագործը խելքը կըհանդիսանայ դարձեալ..... Ընդարձ այս մասին պէտք է մի փոքր խոր մտածել և տեսնել ի՞նչ բաներից հետևանք է այս և այն մարդութիւնը։ Օրինակ ոմն է հարկադրում մարդու կեղծաւորուիլ։ Յայտնի է որ ազիտութիւնը։ Երբ որ մի ազիտ հացատէր սիրում է կեղծաւորներին և ատում ճշմարտախօսներին, այնուհետև քաղցած խելքները հաւաքում են նորա գլխին և կեղծաւորուելով սկսում տղրուկի պէս ծըծել նորա արիւնը. տէրը կարող չի կեղծաւորուիլ, ըստ որում նորա սեփականութիւնը երկիւղն է։

Տէրս հասարակութիւնը առօրեայ պա-

հանջմունքից ստիպուած հրաւիրում է մի խելացի և առաքինի դաստիարակ, և մի և նոյն ժամանակ պահանջում է նորանից որ նա իւր պէս մտածէ, իւր պէս նատէ վիր կենայ, այսինքն իւր պէս տգէտ լինի։

Տգէտ հայրը ուրիշի օրինակէն թելադրված ուսման է տալիս իւր որդոյն. բայց որդին ուսման ճաշակը առնելէն զկնի ընդհատվում է հօր օժանդակութիւնը միմիայն նորա համար, որ որդին այլապէս սկսաւ մտածել։ Տգէտ տղամարդը ցանկանում է ուսումնական և խելացի կին ունենալ, ոչ հասկանալով թէ ե՞նչ է ուսումը, այլ միայն անունի համար, որ ասեն այս ինչ մարդը ուսումնական կին ունի. բայց յետոյ սկսում է սահմանափակել նորա մարդկային բարի ձգտողութիւնքը և հարկադրում է վարուել նորան այնպէս, ինչպէս բոլոր տգէտ կանայք։ Այսպիսի անհամար խոչընդակութիւններով լե�է աշխարհս, բայց բոլորի աղբիւրը մի է՝ և այդ տգիտութիւնն է։ Ուսմի տգէտ և մոլի հասարակութեան մէջ ոչ միայն չէ առաքինացնում մարդու նորա մտաց զարգացումը, այլ և մոլեցնում է։ Բայց երբ հետզհետէ սկսում է այդ մանանխայ հատը աճիլ և սփռիլ իւր ճիւղերը հասարակութեան բոլոր դասակարգերի մէջ, այնուհետև առաքինութիւնը յաղթում է մոլութեանը, և սկսում է փոխարինել երկրագունեան դրօշակը Ազգային և Բարոյական լուսաւորութեան, այն է՝ Հաւատոյ, Յուսոյ և Սիրոյ...

(Շ-ր-ն-լէն)

Պ. Ազայեանց

ԲԱՐԻ ՆԱԽԱՆՁ

Կուրծքի տակին բարախում է անդադար
Այն, որ կոչի Բ-ր-ի Ն-խ-ն՝ բարերար,
Մինչ անհրաժեշտ ստիպում է եւ նորան
Արիանալ, որ ապրում է անսատար։

Թէ ծուլութեան նիրհով կամի որ թմրիլ,
Իսկոյն խթան նորա մտաց կը խոթէ,
Մինչ նա ցանկայ հեշտեաւ իւր կեանք անցանել,
Կազդէ իրան, ասելով թէ «ամօթ» է։

Կը ծդէ վաղ նորա սիրտը մեծ եռանդ,
Որով կառնէ այն պղերգին ջերմեռանդ,
Հապա շուտով մանկական իսկ մտածմունք
Նորա համար կրնին ունայն եւ անչայտ։

Գուցէ մէկը վառված սիրով Ազգային
Կը կատարէ գործ արժանի օգտաւէտ,
Դա չի թողուլ այլոց անմասն բնաւին,
Այլ կը ստիպէ օժանդակել իսկ յաւէտ։

Նա երջանիկ կը համարուի, որ ունի
Այդ բարիքը — այդ սիրելի նախանձը,
Որով կարէ զայն ստանալ, զոր չունի,
Եւ բարւոքել իւր վիճակը, իւր անձը։

Ո՞վ արդեօք ով չի համբերիլ նեղութեան,
Որ կը սիրէ այդ առիթը բարութեան,
Նորա համար սար, ծոր, ծով, ցամաք լայն...
Բաղցր է յուզել նպատակին իւր միայն։

Թէ տեսանէ յառաջադէմ վիճակում
Ջիւր ընկերն առաքինի խոհական,
Կը համոզէ իրան եւս նոյն կարգում
Հետեւիլ նորա ընթացքին ժրաջան։

Եթէ ունի բարի անուն իւր ընկեր,
Կը յաւելու նորա սրտում դաղտնի սէր,
Յոր եւ ինքն կը ջանայ միշտ անհամբեր,
Գտնել պատիւ — բարի անուն բարեբեր։

Ծոյլ զաւակդ թող ուսանի նորա մօտ,
Որ ունի եւ այդ նախանձը դովական,
Եւ նրան կը բուրէ շոյտ արթնութեան հոտ,
Որ կընթանայ շաւղօր ուսման պատուական։

Բարի նախանձ, քեզ սուր դիտեմ քան զթուր,
Որ կը վառես մարդոյ սիրտը որպէս հուր,
Սակայն յետոյ երբ կը հասնի իւր ըղձին,
Կդովացնես նոյն իսկ սիրտը տալով ջուր։

Ով քեզ չունի, բարիքներից զուրկ է նա,
Եւ իւր օգուտն ոչ կարենայ դիտել նա,
Այլ այնպիսին կարի թշուառ վիճակում
Կը լինի միշտ, եւ անանուն իւր կեանքում։

Եթէ մի ազգ, կամ որ քաղաք քեզ չունի,
Չէ կարելի ասել նրան թէ ունի
Ամենայն ինչ բարեմասնեայ, գործ արժանի,
Գործ ազգային — Դպրոց ասեմ կենդանի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՐԶԱԲԷԿԵԱՆՑ։

Ի Շ-մ-խ-ի։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ